ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Անի Մովսիսյան
Նարինե Խաչատրյան

Ներածություն

Ներկայումս ՀՀ պետական քաղաքականության նպատակներից է հայերի ներգաղթի ապահովումը, սակայն պետք է փաստել, որ այսօր նաև բուռն կերպով արտագաղթ է տեղի ունենում: Բացի սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներից, հայրենադարձությունը, ինչպես նաև միգրացիոն մյուս գործընթացները, հանգեցնում են մի շարք հոգեբանական խնդիրների, որոնցից են տարբեր մշակութային սոցիալականացում անցած և տարբեր սոցիալական պայմաններում ձևավորվող, ինչպես նաև տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող հայերի (սփյուռքահայեր, տեղաբնակներ, հայրենադարձներ, միգրանտներ) միջխմբային և միջանձնային փոխադարձ ճանաչման, երկխոսության, հարաբերությունների ձևավորման և հաստատման առանձնահատկությունները տարբեր մշակութային համատեքստերում:

Փոխադարձ ընկալումների հիմքում կարևոր տեղ են զբաղեցնում սոցիալ-մշակութային միջավայրի, մտածելակերպի, համոզմունքների և արժեքների հետ կապված տարբերությունները: Լ. Աբրահամյանը, քննարկելով Գ. Նժդեհի այն դրույթը, որ հայի ինքնության բազմատարրության մեջ «ավելի ողբալի է սակայն հոգեբանական ցրվածությունը» [1, էջ 249], հարցադրում է անում, թե ինչ մասշտաբների է հասնում այդ «հոգեբանական ցրվածությունը»՝ հաշվի առնելով այն, որ «սոցիալ-մշակութային միևնույն պայմանների առկայությունն է ապահովում հաբիտուսների նույնացման գործընթացները» (նույն տեղում, էջ 250):

Միջմշակութային հոգեբանության դասական հայեցակարգերում գերակշռում են Ես-ի բաղադրիչների մշակութային տարբերությունների, առավելապես, Ես-ի ինդիվիդուալիստական–կոլեկտիվիստական արժեքային և վարքային մոդելների համեմատությունները [10, 2, 3, 7, 8, 9]: Սակայն, համաձայն Դ. Օյզերմանի և համահեղինակների՝ մշակույթների դիխոտոմիկ դիտարկումը, որպես ինդիվիդուալիստական կամ կոլեկտիվիստական, պետք է փոխարինվի այն ենթադրությամբ, որ բոլոր

հասարակություններում մարդիկ ենթարկվում են այնպիսի սոցիալակա-նացման, որը հնարավորություն է տալիս մեկնաբանել իրավիճակը թե՛ ինդիվիդուալիստական, թե՛ կոլեկտիվիստական արժեքներին համապա-տասխան: Եվ այսպիսով, մշակույթները տարբերվում եմ միմյանցից այն իրավիճակների քանակով և տեսակով, որոնք առաջ են բերում (սուբյեկ-տիվ) մեկնաբանություններ [4, 5]:

Հարցին նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Շ. Շվարցը, որն իրավիճակի փոխարեն կիրառելով ազդակ եզրույթը՝ պնդում է, որ մշա-կույթը տեղակայված չէ անհատների մտքում կամ գործողություններում: Ընդհակառակը՝ այն տեղակայված է անհատից դուրս և դրսևորվում է ճնշման միջոցով, որին ենթարկվում է անհատը՝ ապրելով համապատաս-խան սոցիալական համակարգում [8]:

Համաձայն Շ. Շվարցի՝ մշակույթը լատենտ, վարկածային փոփոխական է, որը հնարավոր է չափել միայն իր դրսևորումներով: Հասարակության մեջ գերակայող արժեքային համակարգը կարող է լինել տվյալ մշակույթի ամե-նաէական առանձնահատկությունը: Իմաստների, հավատալիքների, իրո-ղությունների, սիմվոլների, նորմերի հարուստ համակարգը արժեքային կողմ-նորոշումների մշակութային դրսևորումն է [9]:

Ունիվերսալ արժեքների տեսություն (Շ. Շվարց)

Մշակութային և միջմշակութային հոգեբանության համատեքստում Շ. Շվարցն առաջ քաշեց ունիվերսալ արժեքների տեսությունը, համաձայն որի՝ մշակույթը, արտահայտելով հասարակության մեջ գերակայող արժե-քային առանցքային կողմնորոշումները, իր հերթին պայմանավորում է ամեն մի անհատի արժեքային նախընտրությունը: Ունիվերսալ արժեքներ ասելով՝ Շվարցը նկատի ունի բոլոր այն արժեքները, որոնք առկա են տարբեր մշա-կույթներում: Շ. Շվարցն իր արժեքների տեսության մեջ առանձնացնում է արժեքներին հատուկ այն վեց գլխավոր առանձնահատկությունները, որոնք ներկայացված են տարբեր տեսություններում.

- Արժեքները հիմնարար համոզմունքներ են:
- Արժեքները վերաբերում են ցանկալի նպատակներին:
- Արժեքներն ունեն համընդհանուր ուժ և գործում են տարբեր իրա-վիճակներում:
- Արժեքները ծառայում են որպես ընտրության ու գնահատման չափանիշ:
- Արժեքները դասակարգվում են ըստ միմյանց նկատմամբ ունեցած կարևորության:

- Բազմազան արժեքների համեմատական կարևորությունն ուղղորդում է գործողությունը [8]:

Ունիվերսալ արժեքների տեսությունն առանձնացնում է տասը հիմնական արժեք, համաձայն այն նպատակների և դրդապատճառների, որոնք ընկած են դրանց հիմքում: Ըստ Շվարցի՝ այս տասը արժեքներն ընդգրկում են տարբեր մշակույթներում նշանակություն ունեցող տարբեր արժեքներ: Տեսությունը պնդում է, որ այս արժեքներն ունիվերսալ են, քանզի ընկած են մարդու գոյության համար անհրաժեշտ մեկ կամ մի քանի պահանջմունքների հիմքում, որոնց շնորհիվ մարդը կարողանում է բավարարել այդ պահանջմունքները: Վերջիններս են՝ անհատի՝ որպես կենսական օրգանիզմի պահանջմունքները, սոցիալական համագործակցության պահանջմունքը, ինչպես նաև խմբի գոյատևման և նրա բարեկեցության համար անհրաժեշտ կարիքները:

Համապատասխանաբար, Շ. Շվարցն առանձնացնում է հետևյալ տասը հիմնական արժեքները [7].

Ինքնուրույնություն (self-direction). այս արժեքը ծագում է վերահսկման և գերազանցելու կենսական, ինչպես նաև փոխազդեցության ժամանակ ինքնավարության ու անկախության պահանջմունքներից:

Խթանում (stimulation). այս արժեքը ծագում է ստիմուլյացիայի և բազմազանության կենսական կարիքից՝ ակտիվության օպտիմալ, դրական մակարդակն ապահովելու համար:

Հեդոնիզմ (hedonism). այս արժեքը ծագում է կենսական պահանջմունքները բավարարելու հաճույքից :

Նվաճում (achievement). այս արժեքը ծագում է կոմպետենտության անհրաժեշտությունից՝ առանձին անհատների և խմբերի գոյատևելու, ինչպես նաև նպատակին հասնելու համար:

Իշխանություն (power). այս արժեքը ծագում է սոցիալական ինստիտուտների գործունեության համար հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից:

Հարկ է նշել, որ վերը քննարկված երկու արժեքները (նվաճում և իշխանություն) կենտրոնանում են սոցիալական հարգանքի վրա: Եթե նվաճման արժեքի դեպքում շեշտը դրվում է փոխադարձ հարաբերություններուվ գործողությունը հաջող իրականացնելու դրսևորման վրա, ապա իշխանության պարագայում շեշտադրվում են ավելի լայն սոցիալական համակարգում գերիշխող դիրքի ձեռքբերումն ու պահպանումը:

Անվտանգություն (security). այս արժեքը ծագում է առանձին անհատի և խմբի ապահովության և կայունության անհրաժեշտությունից:

Կոնֆորմություն (conformity). այս արժեքը ծագում է այն սոցիալական պահանջից, որ անհատները պետք է զսպեն այն հակումները, որոնք կարող են խանգարել և խզել հանգիստ փոխհարաբերությունները և խմբային գործունեությունը:

Ավանդույթ (tradition). այս արժեքը ծագում է ազգային մշակույթի պահպանման և փոխանցման անհրաժեշտությունից:

Վերոնշյալ երկու արժեքները մոտ են միմյանց իրենց դրդող հիմքով: Նրանց հիմնական նպատակն է՝ ենթարկեցնել Ես-ը սոցիալական սպասումներին: Եթե կոնֆորմությունը ենթադրում է ենթարկում հաճախակի փոխհարաբերակցվող մարդկանց, ապա ավանդույթը՝ ավելի լայն, վերացական խմբին:

Կամեցողություն (benevolence). այս արժեքը ծագում է խմբային համագործակցության բազային պահանջից, ինչպես նաև կապվածության, պատկանելության կենսական պահանջմունքից:

Ե՛վ բարյացակամությունը, և՛ կոնֆորմությունը նպաստում են սոցիալական փոխհարաբերություններում համագործակցությանը և աջակցությանը: Սակայն եթե կամեցողությունը բխում է այդպես վարվելու ներքնայնացած դրդապատճառից, ապա կոնֆորմության պարագայում մարդն այդպես է գործում, որպեսզի խուսափի իր համար բացասական հետևանքներից:

Ունիվերսալություն (universalism). այս արժեքը ծագում է անհատի և խմբի գոյատևման պահանջմունքից: Ունիվերսալությունը ներառում է երկու տիպի մտահոգություն՝ աշխարհի և բնության բարեկեցություն (լայն աշխարհայացք, սոցիալական արդարություն, հավասարություն, խաղաղ աշխարհ, գեղեցիկ աշխարհ, բնության հետ միասնություն, իմաստություն, շրջապատող միջավայրի պաշտպանություն):

Իդեալական հույզերի հայեցակարգ (Ժ. Ցայ)

Համաձայն մշակութային հոգեբան Ժ. Ցայի՝ գրեթե բոլոր մարդիկ ցանկանում են լավ զգալ իրենց, սակայն «լավ» զգացումները, որոնց համար մարդիկ պայքարում են, պայմանավորված են այն հուզական վիճակներով, որոնք նրանք գնահատում, նախընտրում և իդեալականում ցանկանում են ապրել: Այդպիսի հուզական վիճակների անհատական և մշակութային տարբերություններն էլ, իրենց հերթին, պայմանավորում են տրամադրություն ստեղծող վարքը (mood–producing behavior) (այն, ինչ մարդիկ անում են լավ զգալու կամ վատ չզգալու համար) [11]:

Հեղինակը դիտարկում է աֆեկտիվ վիճակը՝ որպես նեյրոֆիզիոլոգիական փոփոխություններ, որոնք ապրվում են որպես զգացմունքներ, հույզեր և տրամադրություններ և կարող են բնութագրվել երկու չափումներով՝ վալենտություն և ակտիվացում: Եթե վալենտությունը վերաբերում է միջավայրից եկող հնարավոր շահի (դրական) կամ կորստի (բացասական) զգացումին, ապա ակտիվացումը՝ այն զգացումին, թե ինչ է պահանջում միջավայրը՝ մոբիլիզացում (ակտիվացման բարձր մակարդակ), թե հնարավորություն է տալիս չմիջամտել (ակտիվացման ցածր մակարդակ): Համապատասխանաբար՝ տարբեր հուզական վիճակներ կարող են բացատրվել այս երկու չափումների համադրությամբ՝ ակտիվացման բարձր մակարդակով դրական (խանդավառություն), ակտիվացման ցածր մակարդակով դրական (հանդարտ, խաղաղ) և այլն [նույն տեղում]:

Ժ. Ցայը նշում է նաև, որ հոգեբանության մեջ հետազոտությունների մեծ մասը հիմնականում վերաբերել է ակտուալ հույզերին՝ վիճակներ, որոնցով մարդիկ հակազդում են իրավիճակներին, մինչդեռ շատ քիչ հետազոտություններ են նվիրվել իդեալական հույզին՝ այն վիճակներին, որոնք մարդիկ իդեալականորեն ցանկանում, նախընտրում են ապրել: Իդեալական հույզերը հիմնված են մարդկանց նախընտրությունների վրա և իրենց մեջ կրում են հզոր մոտիվացիոն ուժ: Այսպիսով, եթե իրական հույզը վերաբերում է հակազդմանը, ապա իդեալականը՝ նպատակին [նույն տեղում]: Իրենց հետազոտությունների արդյունքում Բ. Կնութսոնն ու Ժ. Ցայը եկան այն եզրակացության, որ մարդկանց իրական հույզերը տարբերվում են նրանից, թե ինչ են նրանք իդեալականում ուզում զգալ: Իրենց միջմշակութային հետազոտությունների արդյունքում Ցայն ու համահեղինակները եկան այն եզրակացության, որ տարբեր մշակութային կողմնորոշումներով անձինք տարբերվում են իրենց իդեալական հուզական վիճակներով: Որպես իդեալական հույզերի տարբերությունները պայմանավորող էական գործոն՝ Ցայը նշում է մշակույթը [12]: Մշակութային գործոնները ձևավորում են այն, թե ինչ են մարդիկ ամենից առավել գնահատում, դիտարկում որպես բարոյական, լավ և արժանի: Համապատասխանաբար՝ մշակույթը պիտի պայմանավորի նաև այն, թե ինչ հուզական վիճակներ են մարդիկ ցանկանում ապրել [11]:

Ինչպես արդեն նշվեց վերևում, իդեալական հույզերն ունեն հզոր մոտիվացիոն ուժ: Ծագելով մշակութային հիմքից՝ նրանք ժամանակի ընթացքում վերածվում են նպատակների: Ժ. Ցայը նշում է, որ մարդիկ կատարում են վարքային ընտրությունը, գիտակցաբար կամ ոչ, հիմնվելով իրենց իդեալական հույզերի վրա: Հեղինակը նաև առաջարկում է դիտարկել տրամադրություն ստեղծող վարքային անհատական, էթնիկ և ազգային տարբերությունները

(հանգստի կազմակերպում, երաժշտական նախընտրություն, թմրադեղերի օգտագործում)՝ հենց իդեալական հույզերով պայմանավորված:

Ժ. Ցայն իր առաջադրած հայեցակարգն անվանել է հույզերի գնահատման տեսություն (affect valuation theory) և, ինտեգրելով այն իրական հույզերի մասին առկա էմպիրիկ տվյալների հետ, առաջարկել է որպես տեսության հիմք դիտարկել հետևյալ դրույթները.

1. իդեալական հուզական վիճակը տարբերվում է իրական հուզական վիճակից,
2. մշակութային գործոններն առավել մեծ ազդեցություն են ունենում իդեալական հույզերի վրա, քան իրական, իսկ խառնվածքն ավելի շատ ազդում է իրական հուզական, քան իդեալական վիճակի վրա,
3. իրական և իդեալական հույզերի միջև առկա տարբերությունները դրդում են տրամադրություն ստեղծող վարքի (mood-producing behavior) (մարդիկ ձգտում են հնարավորինս մոտեցնել միմյանց իրական և իդեալական հուզական վիճակները): Վերջինս կարևոր հիմք է տալիս հոգեկան առողջության հայեցակարգի զարգացման համար (որպես սուբյեկտիվ ինքնազգացողություն) [նույն տեղում]:

Այսպիսով, վերը քննարկված տեսությունների դրույթներն ապացուցում են, որ անձը մեկուսացված չէ, այն ձևավորվում, կառուցվում է որոշակի մշակութային համատեքստում, որը հանդես է գալիս ոչ թե որպես պասիվ միջավայր, այլ ակտիվորեն մասնակցում և անգամ պայմանավորում է անհատի Ես-ի զարգացման ընթացքն ու տալիս նրան որոշակի ուղղվածություն: Մշակութային համատեքստն ամբողջվին պարուրում է Ես-ին, տալիս նրան ուղղվածություն և այն հիմնական կողմնորոշումը, որի հիման վրա նա հետագայում կկազմակերպի իր թե՛ ներքին հոգեկան գործընթացները, թե՛ արտաքին վարքն ու ակտիվությունը:

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն

Կատարված հետազոտության նպատակն է՝ բացահայտել տարբեր մշակութային համատեքստերում առաջնային սոցիալականացում անցած հայ երիտասարդների անձնային արժեքային համակարգի և Ես-ի ամբողջական զգացումը պահպանելու համար իրական և ցանկալի իդեալական հույզերի դրսևորման առանձնահատկությունները:

Աշխատանքի վարկածն է. ենթադրվում է, որ անկախ միևնույն ազգի պատկանելության փաստից, տեղաբնակ, հայրենադարձ և սփյուռքահայ

երիտասարդների մեջ տարբերություններ կլինեն արժեքային կողմնորոշումների համակարգում և իրական/իդեալական հույզերի համադրության մեջ:

Հետազոտության համար առանձնացվել է 3 խումբ՝ ամեն խմբում 30 մասնակից (20-25տ.)՝ հավասար սեռային բաշխմամբ (15 իգական, 15 արական):

Առաջին խմբում ներառվել են հայ երիտասարդներ, ովքեր ծնվել և ապրել են միայն Հայաստանում (քննարկման ընթացքում այս խումբը կանվանենք տեղաբնակներ):

Երկրորդ խումբը կազմել են հայ երիտասարդները, ովքեր ծնվել և առնվազն 9-10 տարի ապրել են այլ երկրում, խոսում են հայերեն և ներկայումս բնակվում են Հայաստանում (ընտրվել են Մերձավոր Արևելքի երկրներում՝ Սիրիա, Իրան, Լիբանան, առաջնային սոցիալականացում անցած հայ երիտասարդներ. քննարկման ընթացքում այս խումբը կանվանենք հայրենադարձներ):

Երրորդ խումբը ներառում է հայ երիտասարդներ, ովքեր ծնվել և ներկայումս բնակվում են Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ տարածքում և հետազոտությանը մասնակցել են անգլերեն լեզվով (քննարկման ընթացքում այս խումբը կանվանենք սփյուռքահայեր):

Հետազոտության ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

Դիմանկար - արժեքային հարցարան (The Portrait Values Questionnaire- PVQIV)

Հույզերի գնահատման ինդեքս (Affect Valuation Index)

Շ. Շվարցի արժեքային հարցարանը ներկայացնում է 10 արժեք՝ համապատասխան 10 սանդղակներով (տե՛ս էջեր 9-11): Հարցարանը թարգմանվել և մշակվել է հայերեն[1] [8]:

Հույզերի գնահատման ինդեքս մեթոդիկան մշակվել է Ժ. Ցայի և Բ. Կնութսոնի կողմից իդեալական հույզերի (հուզական վիճակներ, որոնք մարդիկ ցանկանում են ապրել) և իրական հույզերի (հուզական վիճակներ, որոնք մարդիկ իրականում ապրում են) տարանջատման նպատակով [12]:

Վերլուծության ժամանակ առանձնացվում են հուզական վիճակների խմբեր՝ Ժ. Ցայի հույզերի վերաբերյալ հայեցակարգին համապատասխան[2]: Ինչպես նշում են հեղինակները, մշակութային համատեքստում իրակա-

[1] Հարցարանն ադապտացվել է հայերեն լեզվով ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի հետազոտական խմբի կողմից, պրոֆեսոր Շ. Շվարցի հետ համատեղ: Ընտրանքը կազմել է 201 ուսանող, տվյալները հավաքվել են 2010թ.:

[2] Արդյունքների մշակման ժամանակ մենք կարողացանք կապ հաստատել հեղինակների հետ էլ.փոստի միջոցով և նրանցից ստանալ հույզերի երկչափ քարտեզը, որը, որպես կանոն, կիրառվում է արդյունքների վերլուծության ժամանակ՝ իհարկե հարմարեցվելով ամեն կոնկրետ մշակութային համատեքստին, որի արդյունքում որոշ հույզեր սղվում ու չեն հաշվարկվում:

նացվող իրենց հետազոտություններում նրանք հիմնականում օգտագործում են բարձր ակտիվությամբ դրական (ԲԱԴ) և ցածր ակտիվությամբ դրական (ՑԱԴ) հույզերը: Հաշվի առնելով մշակութային մի շարք փոփոխականների ազդեցությունը՝ հետազոտության ընթացքում մենք նույնպես մշակել և հարմարեցրել ենք մեթոդիկան և կենտրոնացել հետևյալ հուզական վիճակների վրա՝ խանդավառված, ոգևորված, հրճված՝ որպես ԲԱԴ և հանդարտ, հանգիստ ու անվրդով՝ որպես ՑԱԴ:

Արդյունքների վերլուծություն

Նախ անդրադառնանք տասը արժեքների, այնուհետև բարձր և ցածր ակտիվության դրական հույզերի վերլուծությանը՝ համեմատություն անցկացնելով երեք խմբում: Խմբերի ընդհանուր վերլուծությունից հետո կանդրադառնանք տեղաբնակ, հայրենադարձ և սփյուռքահայ խմբերի տղաների և աղջիկների համեմատական վերլուծությանը: Նկար 1-ում և աղյուսակ 1 և 1ա-ում ներկայացված են երեք խմբերի արժեքային կողմնորոշումների միջինացված նշանակությունները, ինչպես նաև խմբերի միջև արժեքների նշանակալի տարբերությունները:



Նկար 1. 1-ին (տեղաբնակ), 2–րդ (հայրենադարձ) և 3–րդ (սփյուռքահայ) խմբերի արժեքային կողմնորոշումների պատկերը

Աղյուսակ 1. **Արդյունքների կենտրոնական միտվածության արժեքները**

ԱՐԺԵՔՆԵՐ	Խումբ 1			Խումբ 2			Խումբ 3		
	M	Std. dev.	MRAT	M	Std. dev.	MRAT	M	Std. dev.	MRAT
Կոնֆորմություն	4.47	0.69	0.21	4.56	0.83	-0.02	4.13	1.09	-0.54
Ավանդականություն	3.89	0.75	-0.37	3.69	0.89	-0.88	3.62	0.95	-1.05
Կամեցողություն	4.72	0.58	0.46	5.17	0.60	0.59	5.33	0.58	0.66
Ունիվերսալիզմ	4.72	0.61	0.45	4.89	0.71	0.31	5.09	0.50	0.42
Ինքնուրույնություն	4.65	0.84	0.39	5.22	0.49	0.64	5.38	0.64	0.71
Ստիմուլյացիա	4.24	0.70	-0.03	4.68	0.80	0.10	4.87	0.68	0.20
Հեդոնիզմ	3.65	1.24	-0.62	4.31	1.35	-0.26	4.69	0.71	0.02
Նվաճում	4.00	1.04	-0.26	4.70	0.79	0.13	4.93	0.89	0.26
Իշխանություն	2.87	0.97	-1.39	3.19	1.10	-1.39	3.51	1.29	-1.15
Անվտանգություն	4.61	0.72	0.34	4.76	0.64	0.19	4.67	0.66	0.01

Աղյուսակ 1ա. **Ստյուդենտի t-չափանիշով ստացված արդյունքների տարբերությունները երեք խմբերի միջև**

ԱՐԺԵՔՆԵՐ	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3
Կոնֆորմություն	1.31	3.56***	2.35*
Ավանդականություն	2.60*	3.56***	0.78
Կամեցողություն	-1.06	-1.59	-0.52
Ունիվերսալիզմ	0.92	0.22	-0.74
Ինքնուրույնություն	-1.53	-1.86	-0.49
Ստիմուլյացիա	-0.74	-1.59	-0.56
Հեդոնիզմ	-1.15	-2.78**	-1.07
Նվաճում	-1.97	-2.59*	-0.77
Իշխանություն	-0.02	-0.99	-0.88
Անվտանգություն	1.06	2.46*	1.28

p*<0,05; p**< 0,01; p***< 0,001

Ինչպես երևում է բերված տվյալներից, կոնֆորմության ցուցանիշն արևմտյան երկրների սփյուռքահայերի մեջ ավելի ցածր է, քան տեղաբնակ հայ երիտասարդների և հայրենադարձ հայ երիտասարդների:

Ցուցանիշները տեղաբնակ և հայրենադարձ երիտասարդների խմբերում առանձնապես շատ չեն տարբերվում, իսկ սփյուռքահայերի հետ տարբերությունները վիճակագրորեն հավաստի են: Ավանդականության դեպքում պատկերը մի փոքր այլ է. նշանակալի տարբերություն է ստացվել առաջին խմբի համար, այսինքն՝ տեղաբնակ հայերն ավելի շատ են տարբերվում իրենց ավանդականությամբ հայրենադարձներից և սփյուռքահայերից: Նշանակալի տարբերություններ են ստացվել նաև հեդոնիզմ, իշխանություն և անվտանգություն արժեքների համար տեղաբնակ և սփյուռքահայ երիտասարդների միջև:

Ըստ տեսության, համաձայն արժեքների դինամիկ կառուցվածքի՝ կոնֆորմությունը, ավանդականությունն ու անվտանգությունը կազմում են արժեքների այն խումբը, որոնք հարում են պահպանողականությանը: Միևնույն ժամանակ, այդ արժեքներն ունեն սոցիալական ուղղվածություն, իսկ վարքի մեջ արտահայտվում են տագնապալի, անհաջողությունից խուսափելու և վտանգներից պաշտպանվելու միտումներով:

Վերը քննարկված տվյալների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ տեղաբնակ հայ երիտասարդները մյուս երկու խմբերից տարբերվում են սոցիալական ուղղվածություն կրող պահպանողական բոլոր արժեքներով: Այդ արժեքներից միայն կոնֆորմության պարագայում են տեղաբնակ և հայրենադարձ երիտասարդները նման, անվտանգությամբ տարբերվում են սփյուռքահայերից, իսկ ավանդականությամբ կտրուկ տարբերվում են և՛ հայրենադարձներից, և՛ սփյուռքահայերից: Տրամաբանորեն կարելի է մեկնաբանել նաև մյուս արդյունքները: Պահպանողական արժեքների արտահայտվածության պարագայում տեղաբնակ հայ երիտասարդները տարբերվում են սփյուռքահայերից նաև, տվյալ դեպքում, նվաճում և հեդոնիզմ անհատական ուղղվածություն ունեցող արժեքների ցածր արտահայտվածությամբ:

Կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն սփյուռքահայերի, տեղաբնակ հայերը տարբերվում են կոլեկտիվիստական մշակույթին հատուկ արժեքներով, ինչը հասկանալի է՝ հաշվի առնելով սոցիալականացման տարբեր մշակութային միջավայրերը: Հետաքրքրականը, սակայն, այն է, որ հայրենադաձ երիտասարդները, սոցիալականացում անցնելով արևելյան մշակույթ ունեցող երկրներում, հիմնականում իրենց արժեքային կողմնորոշումներով չեն տարբերվում արևմտյան երկրներում ապրող երիտասարդներից՝ բացառությամբ կոնֆորմության արժեքից:

Հետաքրքիր է նաև դիտարկել արժեքային կողմնորոշումների միջսերային տարբերությունները երեք խմբերի միջև:

Աղյուսակ 2 . **Ստյուդենտի t-չափանիշի արժեքների գենդերային տարբերությունները երեք խմբերի միջև**

ԱՐԺԵՔՆԵՐ	ԱՂՋԻԿՆԵՐ			ՏՂԱՆԵՐ		
	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3
Կոնֆորմություն	3.016**	3.421**	0.653	-1.248	2.321*	2.879**
Ավանդականություն	3.028**	3.999***	1.033	0.883	1.308	0.273
Կամեցողություն	-1.402	-1.766	-0.456	-0.358	-0.083	0.207
Ունիվերսալիզմ	1.428	1.806	-0.111	-0.314	-1.058	-0.675
Ինքնուրույնություն	-2.39*	-2.502*	0.086	0.403	-0.702	-1.266
Ստիմուլյացիա	-0.613	-0.258	0.434	-0.576	-2.641*	-1.41
Հեդոնիզմ	-1.728	-4.079***	-0.825	0.547	-0.529	-1.003
Նվաճում	-1.926	-2.169*	-0.37	0.401	-1.948	-1.029
Իշխանություն	0.736	-1.309	-1.784	0.85	-0.169	0.306
Անվտանգություն	-0.288	1.261	1.779	0.509	2.218*	0.365

p*<0,05; p**< 0,01; p***< 0,001

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ երևում է, որ արժեքային կողմնորոշումներում աղջիկների մեջ նշանակալի տարբերություններն ավելի շատ են, քան տղաների, ընդ որում՝ այդ տարբերությունները ցույց են տալիս, որ տեղաբնակ հայ աղջիկներն առավել շատ տարբերվում են ինչպես սփյուռքահայ, այնպես էլ հայրենադարձ աղջիկներից:

Դիտարկենք, թե որոնք են այդ տարբերությունները: Նախ՝ նշենք, որ արժեքային կողմնորոշումների տարբերությունները հայրենադարձ և սփյուռքահայ աղջիկների միջև նշանակելի չեն: Ինչ վերաբերում է տեղաբնակ հայ աղջիկների արժեքների տարբերությանը, ապա վերլուծության այս փուլում հստակ երևում է, որ Հայաստանում սոցիալականացում անցած աղջիկները հստակ տարբերություններ ունեն ինչպես հայրենադարձ, այնպես էլ սփյուռքահայ աղջիկների համեմատ, ի տարբերություն Հայաստանում սոցիալականացում անցած տղաների: Այսպես, օրինակ, տեղաբնակ աղջիկների մեջ նշանակալի բարձր են սոցիալական ուղղվածություն կրող կոնֆորմության և ավանդականության արժեքները և՛ հայրենադարձ աղջիկների, և՛ սփյուռքահայ աղջիկների համեմատ: Անձնային ուղղվածություն ունեցող արժեքների պարագայում ևս կան հստակ տարբերություններ. ինքնուրույնություն արժեքի պարագայում նշանակալի տարբերություններ են գրանցվել ինչպես տեղաբնակ և հայրենադարձ աղջիկների, այնպես էլ տեղաբնակ և սփյուռքահայ աղջիկների միջև, ինչը ցույց է տալիս, որ սփյուռքահայ և հայրենադարձ աղջիկները, որոնք առաջնային սոցիալականացում են անցել շատ տարբեր՝ արևելյան և

արևմտյան մշակութային միջավայրերում, այնուամենայնիվ, տարբերվում են Հայաստանում սոցիալականացում անցած աղջիկներից վարքով և պատկերացումներով, իրենց անկախությամբ: Անհատական ուղղվածություն ունեցող այլ արժեքներով՝ հեդոնիզմ և նվաճում, տարբերություններ են ստացվել միայն տեղաբնակ և սփյուռքահայ աղջիկների միջև, ինչպես և ամբողջ ընտրանքի արդյունքների վերլուծության ժամանակ: Այսպիսով, ստացված տվյալների հիման վրա կարելի է փաստել, որ տեղաբնակ աղջիկների մեջ ավելի արտահայտված են պահպանողական արժեքները, իսկ հայրենադարձ աղջիկներն իրենց արժեքներով ավելի մոտ են սփյուռքահայերին, որոնք մեծացել և ապրում են արևմտյան երկրներում:

Այժմ անդրադառնանք տղաների տվյալների վերլուծությանը: Եթե հայրենադարձ և տեղաբնակ տղաների արժեքների միջև կարելի է տեսնել տարբերություն սփյուռքահայերի հետ միայն կոնֆորմության արժեքի առումով, ապա տեղաբնակ և սփյուռքահայ տղաների միջև տարբերություններն առկա են ևս երկու արժեքների առումով՝ ստիմուլյացիա և անվտանգություն: Այսպիսով, սփյուռքահայ տղաների մեջ նշանակալիորեն բարձր է անձնային ուղղվածության ստիմուլյացիայի արժեքը, զգալիորեն ցածր են սոցիալական ուղղվածություն կրող կոնֆորմության և անվտանգության արժեքները, ի տարբերություն տեղաբնակ տղաների: Սփյուռքահայ արական սեռի երիտասարդների պարագայում, տեղաբնակ հայ երիտասարդների համեմատ, առավել արտահայտված են անձնային ուղղվածության արժեքները և ավելի քիչ՝ պահպանողականության սոցիալական ուղղվածության արժեքային կողմնորոշումները:

Այժմ անդրադառնանք հույզերի գնահատման ինդեքս մեթոդիկայի արդյունքների վերլուծությանը [12]:

Աղյուսակ 3. **Հույզերի գնահատման ինդեքսի արդյունքների կենտրոնական միտվածության արժեքները**

Հույզերի գնահատման ինդեքս	**Խումբ 1**		**Խումբ 2**		**Խումբ 3**	
	M	Std. Dev	M	Std. Dev	M	Std. Dev
Իդեալական ԲԱԴ	3.29	0.77	3.79	0.79	3.83	0.65
Իրական ԲԱԴ	2.64	0.79	2.88	0.93	2.89	0.86
Իդեալական ՑԱԴ	3.56	0.87	3.68	0.80	2.99	0.71
Իրական ՑԱԴ	3.06	0.63	3.04	0.68	2.43	0.79

Աղյուսակ 3ա. **Ստյուդենտի t-չափանիշով ստացված արդյունքների տարբերությունները երեք խմբերի միջև**

Հույզերի գնահատման ինդեքս	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3
Իդեալական ԲԱԴ	-2.495*	-2.971**	-0.239
Իրական ԲԱԴ	-1.038	-1.136	-0.048
Իդեալական ՑԱԴ	-0.566	2.734**	3.478***
Իրական ՑԱԴ	0.076	3.338**	3.21**

p*<0,05; p**< 0,01; p***< 0,001

Աղյուսակ 3-ի և 3ա-ի տվյալների համաձայն՝ առաջին, երկրորդ և երրորդ խմբերը տարբերվում են միմյանցից իրենց իդեալական հուզական վիճակների՝ ԲԱԴ-ի (բարձր ակտիվությամբ դրական) և ՑԱԴ-ի (ցածր ակտիվությամբ դրական) միջին ցուցանիշներով: Նախ՝ ցույց տանք ԲԱԴ և ՑԱԴ տարբերությունները յուրաքանչյուր խմբի համար, ապա համեմատենք այդ հույզերը երեք խմբերի միջև: Իրական և իդեալական ԲԱԴ և ՑԱԴ հույզերի տարբերությունը յուրաքանչյուր խմբի համար ցույց է տալիս, թե ցանկալի և իրական ապրվող հուզական վիճակների միջև տարբերություններ գոյություն ունեն, թե ոչ: Որքան մեծ է տարբերությունն իդեալականի և իրականի միջև, այնքան ավելի է արտահայտված իրական և իդեալական հույզերի միջև դիսոնանսը, և նույնքան սուր է այդ իդեալական հույզն իրականում ունենալու և ապրելու ձգտումը: Եթե տեղաբնակների խմբում իդեալական հուզական վիճակներում առավել արտահայտված է ՑԱԴ-ը, իսկ հայրենադարձների պարագայում ԲԱԴ-ը և ՑԱԴ-ը մոտ են իրար, ապա սփյուռքահայերի խմբում հստակ է արտահայտված ԲԱԴ-ը: Ընդ որում, հայրենադարձների և սփյուռքահայերի իրական ապրվող և իդեալական ԲԱԴ հույզերի միջև տարբերություններն ավելի վառ են արտահայտված, քան տեղաբնակների իրական և իդեալական ԲԱԴ հույզերի միջև, իսկ իրական ապրվող և իդեալական ՑԱԴ հույզերի միջև տարբերություններն ավելի վառ են հայրենադարձների, ավելի քիչ՝ տեղաբնակների, և նվազագույնն են սփյուռքահայերի մեջ: Այսպիսով, տեղաբնակների պարագայում ՑԱԴ հույզեր ունենալու ձգտումն ավելի արտահայտված է, հայրենադարձների մեջ ԲԱԴ և ՑԱԴ հույզեր ապրելու ձգտումը գրեթե հավասար է, իսկ սփյուռքահայերի ձգտումը՝ ապրել ԲԱԴ հույզեր, առավել վառ է արտահայտված, և նվազագույնն է ՑԱԴ հույզեր ապրելու ձգտումը:

Նշանակալի տարբերություն է նկատվում ԲԱԴ իդեալական հույզ ապրելու պարագայում ինչպես առաջին և երրորդ, այնպես էլ առաջին և երկրորդ խմբերի երիտասարդների միջև. այսինքն՝ բաձր ակտիվության

դրական հույզեր ունենալու ցանկությունն ավելի վառ է արտահայտված հայրենադարձների և սփյուռքահայերի մեջ, ի տարբերություն տեղաբնակների: ՑԱԴ իդեալական և իրական հույզերի պարագայում նշանակալի տարբերություններ են ստացվել ինչպես առաջին և երրորդ, այնպես էլ երկրորդ և երրորդ խմբերի միջև, այսինքն՝ տեղաբնակ և հայրենադարձ հայ երիտասարդները նման են միմյանց ցածր ակտիվությամբ դրական հույզեր ունենալու ցանկությամբ և իրականում այդ հույզերն ապրելու առումով, ի տարբերություն սփյուռքահայերի:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ տեղաբնակ հայ երիտասարդների խմբում, որտեղ գերակայում էին պահպանողականության, սոցիալական կենտրոնացվածության արժեքային կողմնորոշումները, իդեալական հուզական վիճակներում առավել արտահայտված է ցածր ակտիվությամբ հուզական վիճակների ձգտումը, իսկ հայրենադարձ և սփյուռքահայ երիտասարդների խմբերում, որոնց հատուկ էր նաև անհատական կենտրոնացվածություն կրող արժեքների դրսևորումը, իդեալական հուզական ապրումներում գերակայում էին բարձր ակտիվությամբ դրական հուզական վիճակները: Ինչպես նշված է իդեալական հույզերի հայեցակարգում, ցածր ակտիվությամբ դրական հույզերն առավել բնորոշ են արևելյան մշակույթին, ի տարբերություն արևմտյան մշակույթի, որտեղ խրախուսվում և ամրապնդվում են բարձր ակտիվության դրական հույզեր:

Հետաքրքիր է նաև անդրադառնալ հույզերի գնահատման ինդեքսի միջխմբային սեռային տարբերություններին:

Աղյուսակ 4. **Ստյուդենտի t-չափանիշի արժեքների գենդերային տարբերությունները երեք խմբերի միջև**

Հույզերի գնահատման ինդեքս	ԱՂՋԻԿՆԵՐ			ՏՂԱՆԵՐ		
	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3	Խումբ 1-2	Խումբ 1-3	Խումբ 2-3
Իդեալական ԲԱԴ	-3.777***	-3.918***	0.568	-0.077	-0.518	-0.48
Իրական ԲԱԴ	-2.218*	-0.875	1.405	0.743	-0.989	-1.459
Իդեալական ՑԱԴ	-0.908	1.345	2.614*	0.0149	3.199**	2.95**
Իրական ՑԱԴ	-0.088	2.652*	2.571*	0.013	1.731	1.602

p*<0,05; p**< 0,01; p***< 0,001

Աղյուսակ 4-ից երևում է, որ երեք խմբերի աղջիկների միջև տարբերություններն ավելի շատ են, քան տղաների երեք խմբերի միջև: Դիտարկենք այդ տարբերությունները: Իդեալական ԲԱԴ հույզերն արտահայտված են սփյուռքահայ և հայրենադարձ աղջիկների մեջ,

իսկ տեղաբնակների պարագայում իդեալական ԲԱԴ հույզերը նշանակալի ցածր են: Այդպիսի նշանակալի տարբերություն չի նկատվում տղաների երեք խմբերի միջև: Իրական ԲԱԴ հույզերի պարագայում նշանակալի տարբերություններ են ստացվել միայն տեղաբնակ և հայրենադարձ աղջիկների միջև, այսինքն՝ իրականում հայրենադարձ հայ աղջիկներն ավելի շատ են ունենում բարձր ակտիվությամբ դրական հույզեր, ի տարբերություն տեղաբնակների: Իդեալական ՑԱԴ հույզերի պարագայում նշանակալի տարբերություններ են ստացվել երկրորդ և երրորդ խմբերում ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար, միևնույն ժամանակ այդպիսի տարբերություն է գրանցվել տղաների առաջին և երրորդ խմբերի միջև: Այս տվյալները ցույց են տալիս, որ հայրենադարձ տղաների և աղջիկների մեջ ցածր ակտիվությամբ դրական հույզեր ունենալու ցանկությունը նշանակալի բարձր է արևմտյան երկրներում բնակվող աղջիկներից և տղաներից, իսկ տեղաբնակների համար այդպիսի տարբերությունը նշանակալի է միայն տղաների համար: Իրական ՑԱԴ հույզերի պարագայում միայն առաջին և երկրորդ խմբերի աղջիկների համար է գրանցվել նշանակալի տարբերություն երրորդ խմբի համեմատ, այսինքն՝ իրականում հայրենադարձ և տեղաբնակ աղջիկներն ավելի շատ են ապրում ցածր ակտիվությամբ դրական հույզեր, քան սփյուռքահայ աղջիկները:

Այսպիսով, գենդերային տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձր ակտիվությամբ դրական հույզեր ապրելու ցանկությունն ավելի վառ է արտահայտված հայրենադարձ և սփյուռքահայ աղջիկների մեջ, ի տարբերություն տեղաբնակների, իսկ ցածր ակտիվությամբ դրական հույզեր ապրելու ցանկությունն ավելի վառ է արտահայտված տեղաբնակ և հայրենադարձ հայ տղաների պարագայում, ի տարբերություն սփյուռքահայերի:

Եզրակացություններ և քննարկում

Այսպիսով, հիմնվելով ստացված արդյունքների վրա՝ կարելի է անել հետևյալ հիմնական եզրակացությունները.

- Արժեքային կողմնորոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղաբնակ հայ երիտասարդներն ակնհայտորեն տարբերվում են սփյուռքահայերից պահպանողական և սոցիալական ուղղվածություն ունեցող արժեքներով, ինչը հատուկ է կոլեկտիվիստական մշակույթներին: Եվ հակառակը, սփյուռքահայերը տարբերվում են տեղաբնակ հայ երիտասարդներից անհատական ուղղվածություն ունեցող արժեքներով, ինչը հատուկ է

ինդիվիդուալիստական մշակույթներին: Այս տարբերություններն օրինաչափ են այդ խմբերի և՛ տղաների, և՛ աղջիկների համար: Հայրենադարձ երիտասարդները կարծես միջանկյալ տեղ են զբաղեցնում վերը նշված երկու խմբերի միջև: Հայրենադարձ աղջիկներն իրենց արժեքային կողմնորոշումներում չունեն տարբերություններ սփյուռքահայ աղջիկների հետ, սակայն ունեն տարբերություններ տեղաբնակ աղջիկների հետ, ընդ որում՝ տեղաբնակ աղջիկները տարբերվում են հայրենադարձ աղջիկներից կոլեկտիվիստական, իսկ հայրենադարձ աղջիկները տեղաբնակներից՝ ինդիվիդուալիստական արժեքներով: Հայրենադարձ տղաները չունեն արժեքների տարբերություններ տեղաբնակ տղաների հետ, սակայն ունեն տարբերություն սփյուռքահայ տղաների հետ միայն կոնֆորմության արժեքով:

- Հույզերի գնահատման ինդեքսի վերլուծությունը ցույց է տալիս, որ հուզական ոլորտում սփյուռքահայ երիտասարդներն ավելի շատ են հակված ունենալու ինդիվիդուալիստական մշակույթին հատուկ ապրումներ, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով այն, որ այդ երիտասարդներն իրենց սոցիալականացումն անցել են արևմտյան մշակութային միջավայրում: Տեղաբնակ երիտասարդներն իրենց հուզական ոլորտում հակված են ունենալու կոլեկտիվիստական մշակույթին հատուկ ապրումներ: Հայրենադարձ երիտասարդների նմանության և տարբերության պատկերը միարժեք չէ. խմբերի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ հայրենադարձ երիտասարդներն իրենց հուզական ոլորտում ձգտում են ունենալ ինչպես ինդիվիդուալիստական, այնպես էլ կոլեկտիվիստական ապրումներ, սակայն գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ հայրենադարձ տղաները հակված են ունենալու կոլեկտիվիստական մշակույթին հատուկ հույզեր, իսկ աղջիկները՝ նաև ինդիվիդուալիստական մշակույթին հատուկ հույզեր:

Ինչպե՞ս կարելի է բացատրել այն, որ հայրենադարձ երիտասարդների, մասնավորապես՝ աղջիկների պարագայում արժեքների համակարգում առավել նմանություններ կան սփյուռքահայ երիտասարդների հետ: Սա բավական հետաքրքիր արդյունք է՝ հաշվի առնելով այն, որ հայրենադարձ երիտասարդներն իրենց առաջնային սոցիալականացումն անցել են արևելյան մշակութային միջավայրում: Այս արդյունքների համար կարելի է միայն ենթադրություններ անել, որը լրացուցիչ ուսումնասիրման և վերլուծության կարիք ունի: Ենթադրություններից մեկը կարող է լինել այն, որ այլ կրոն և մշակույթ ունեցող միջավայրում հայերը ստիպված են պահպանել

իրենց ազգային հոգեկերտվածքը, ինչը կարող է նպաստել ավելի ինդիվիդուալիստական արժեքների առաջացմանը, ի հակադրություն կոլեկտիվիստական մշակույթի, որը բնորոշ է այն երկրներին, որտեղ ծնվել և մեծացել են մեր հետազոտության հայրենադարձ մասնակիցները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան, L**. Հայաստանը և հայկական Սփյուռքը. տարանջատում և հանդիպում, Երևան, «*21-րդ ԴԱՐ*», թիվ 1 (11), 2006:
2. **Мацумото, Д.** *Психология и культура*. СПб., Питер, 2003.
3. **Markus, H. Kitayama, Sh.** Culture and the Self: Implications for Cognition, Emotion, and Motivation, *Psychological Review*, N 98 (2) 1991, pp. 224-253.
4. **Oyserman, D., Kemmelmeier, M., Coon, H.** Cultural Psychology, A New Look: Reply to Bond, Fiske, Kitayama and Miller, *Psychological Bulletin*, Vol. 128, N 1, 2002, pp. 110-117. Հասանելի է http://www.sitemaker.umich.edu/daphna.oyserman/files/okc_psy_bull_2002.pdf
5. **Oyserman, D., Lee, S.** Priming culture: Culture as situated cognition, in Sh. Kitayama&D. Cohen (eds) *Handbbok of Cultural Psychology*, 2007. Հասանելի է http://sitemaker.umich.edu/culture.self/files/oyserman___lee__2007_._priming_culture.pdf
6. **Schwartz, S. H.** Value priorities and behavior: Applying a theory of integrated value systems, in C. Seligman, J.M. Olson, & M.P. Zanna (eds), *The Psychology of Values: The Ontario Symposium*, Hillsdale, NJ: Erlbaum. Vol. 8, 1996, pp.1-24.
7. **Schwartz, S. H**. Les valeurs de base de la personne. Theorie, mesures et applications [Basic human values: Theory, measurement, and applications]. *Revue Fran3aise de Sociologie*, N42, 2006, pp. 249-288.
8. **Schwartz, S**. **H**. Culture matters: National value cultures, sources and consequences, in Robert S. Wyer, Chi-yue Chiu, Ying-yi Hong (eds) *Understanding culture: Theory, research, and application,* NY, Tylorand Francis Group, 2009, pp. 127-150.
9. **Triandis, H. and Suh E.** Cultural Influences on Personality. *Annual Review of Psychology*, N53, 2002, pp. 133-160.
10. **Tsai, J.** Ideal affect: Cultural Causes and Behavioral Consequences. *Perspectives on Psychological Science,* N2, 2002, pp. 242-259. Հասանելի է http://wwwpsych.stanford.edu/~tsailab/index.htm
11. **Tsai, J., Knutson, B., & Fung, H.** Cultural Variation in Affect Valuation, *Journal of Personality and Social Psychology,* N 90, 2006, pp. 288-307. Հասանելի է http://www-psych.stanford.edu/~tsailab/index.htm